



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՅԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Ուրբաթ, 4 Ապրիլ. Երեկոյեան նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սըրբազան Հայրը:

Շաբաթ, 5 Ապրիլ. Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ չարչարանաց եւ մտանելոյն ի վիրապն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Սուրէն Քհնյ. Ղազարեան:

Կիրակի, 6 Ապրիլ. 2. Կիրակի Քառասնորդաց. Գալստեան: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, ապա միաբան հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Նոր Երուսաղէմ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Հանդիսապետն էր Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան: «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց Տ. Խաղ Ծ. Վրդ. Զոհնտուրեան:

Հինգշաբթի, 10 Ապրիլ. Երեկոյեան ժամը 7-ին Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահօց վերջին «Հանգստեան» ժամերգութիւնը:

Ուրբաթ, 11 Ապրիլ. Մայր Տաճարին մէջ պաշտուեցան Մեծ Պահօց «Արեւագալի» եւ «Խաղաղական» վերջին ժամերգութիւնները:

Շաբաթ 12 Ապրիլ. Յիշատակ Յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրիգորի: Ժամարարն էր Նինոծմինդայի եւ յարակից գիւղերու հոգեւոր հովիւ Տ. Արմաշ Քհնյ. Պօղոսեան:

Կէսօրէ ետք, Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ապա մեր Վերնամատրան մէջ պաշտուեցաւ Երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ, որմէ ետք կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր, տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Կիրակի, 12 Ապրիլ. Ծաղկազարդ: Առաւօ-

տեան ժամը 6:15-ին, հանդիսապետութեամբ՝ Տ. Կորին Եպս. Բաղդասարեանի, միաբան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մեր Վերնամատրան մէջ: Հայոց երկրորդ մուտքէն ետք նոյն տեղւոյն մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց՝ Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռադարձ մեծահանգէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Թափօրականք ի ձեռին ունէին ձիթենեաց եւ արմաւենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորուոց թափօրները:

Վանք վերադարձին, Հայոց Թաղի ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը եւ Ժառանգաւոր սաները «Որ զխորհուրդ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան:

Նոյն առաւօտեան Ս. Պատարագ մատուցուեցաւ նաեւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Հրեշտակապետաց Վանուց Տեսուչ՝ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան: Ս. Պատարագէն ետք վանքի շրջափակէն ներս կատարուեցաւ թափօր եւ մանուկներու օրհնութիւն:

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Դռնբացէք»-ի արարողութեան նախագահեց Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք Սըրբազան Հայրը:

«Դռնբացէք»-ի արարողութիւն կատարուեցաւ նաեւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ:

Աագ Երեքշաբթի, 15 Ապրիլ. Յիշատակ Տասըն Կուսանաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւիթը գտնուող Հայոց Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան: Ապա կատարուեցաւ «Ուխտաւորաց թափօր» տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Ասագ Հինգշաբթի, 17 Ապրիլ.- (Յիշատակ վերջին ընթերցաց)։ Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»։

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Ասագ խորանին վրայ մատուց Հայաստանէն ուխտաւորաբար Ս. Աթոռ ժամանած՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան գրասենեակի տնօրէն՝ Տ. Վրթանէս Եպս. Աբրահամեան։ «Հայր Մեր»-էն առաջ կարդացուեցաւ Ս. Բարսեղ հայրապետի Հաղորդութեան մասին ճառը՝ գերազանցօրէն վեհ եւ շինիչ խրատներով լեցուն։

Ժամը 14:30-ին, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Ոսնլուայի արարողութիւն՝ հետեւողութեամբ Քրիստոսի ձեռքով իր աշակերտներու ոտքերը լուալու օրինակին։ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան Սրբազան Հայրը մեծ վաշելութեամբ յատուկ այս օրուան համար գանձատունէն դուրս բերուած զգեստները հագած կանգնեցաւ խորանին մէջտեղ եւ իր երկու կողմերը շարքով կանգնած տասներկու Եպիսկոպոսներ ու վարդապետներ, ի նշան՝ տասներկու առաքելալներուն։ Արտասանուած կանոնական աղօթքներէն ու երգուած շարականներէն ետք անոնք կարգով մօտեցան Սրբազան Հօրը, զոր իրենց ոտքերը ջուրով լուալէ ետք նաեւ իւղ քսեց անոնց վրայ, յօրինակ՝ Մարիամի կողմէ Քրիստոսի ոտքերը օծելուն։ Արարողութեան վերջաւորութեան, Երուսաղէմի եւ Մերձաւոր Արեւելքի Անգլիկան եկեղեցւոյ եպիսկոպոս՝ Տ. Հուսամ Նաուժ Ասագ խորանէն անգլերէնով կարդաց Ոսնլուայի աւետարանը։

Երեկոյեան ժամը 16:30-ին հանդիսապետութեամբ՝ Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեանի կատարուեցաւ եկեղեցական արարողութեամբ եւ թափօրով երթ դէպի Քրիստոսի Առաջին Բանտ ի Ս. Հրեշտակապետաց, Չարչարանաց խորան եւ Ս. Ծառ։ Ապա թափօրով երթ դէպի Քրիստոսի Երկրորդ Բանտ ի Ս. Փրկիչ։

Գիշերուան ժամը 7:00-ին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Ճաւարման կարգը»։ «Փառք ի բարձունս»-էն ետք Տաճարին խորհրդաւոր մթութեան մէջ «Յայսմաւորքի Ամպիրոն»-էն քարոզեց Զատկական տօներուն առիթով Սուրբ Աթոռ ժամանած Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Արցախի հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպանութեան գրասենեակի տնօրէն՝ Տ. Վրթանէս Եպս. Աբրահամեան։ Ապա արարողութիւնը շարունակուեցաւ եւ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան Սրբազան Հայրը «Խաչի քո Քրիստոս» շա-

րականի երգեցողութեան ատեն թափօր դարձաւ Մայր Տաճարին մէջ, ապա Միաբանութիւնը երկըրպագութիւն ըրաւ Խաչափայտի մասունքակիր խաչին։ Արարողութիւններն իրենց լրումին հասան գիշերուան ժամը 11:30-ին։

Ասագ Ուրբաթ, 18 Ապրիլ.- (Յիշատակ Չարչարանաց Խաչելութեան եւ Թաղման Տեսն մերոյ Յիսուսի Քրիստոսի)։ Կէսօրէ ետք ժամը 1:15-ին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամաստան մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան»։ Հանդիսապետն էր Տ. Թէոփորոս Եպս. Զաքարեան։

Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Թաղման Կարգ»-ը։ Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազան Հայրը։

Ասագ Շաբաթ, 19 Ապրիլ.- (Ճրագալոյց Զատկի)։ Առաւօտեան ժամը 10:30-ին Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէ, բանալին առնելով Ասագ Թարգման Տ. Վազգէն Վրդ. Ալէքեանի ձեռքէն։

Ժամը 11:15-ին Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը, Հ.Ն.Մ-ի եւ Հ.Մ.Ը.Մ-ի սկառտներով եւ նուագախումբերով առաջնորդուած, մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորեայի յարակից հանդիսութիւնները, սկսելով Ս. Գերեզմանի դրան կնքումէն։ Յունաց Թափօրէն ետք, մեր լուսահանը՝ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան, Յունաց Ամեն. Տ. Թէոփիլոս Պատրիարքին հետ մտաւ Ս. Գերեզման, ուրկէ հինգ վայրկեան յետոյ դուրս տրուեցաւ նուիրական լոյսը, որ ակնթարթի մը մէջ մեր լուսակիրներու կողմէ փոխանցուեցաւ մեր վերնամաստան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Լուսարարապետ Սրբազան Հօր, որ լուցեալ մոմերու փունջով օրհնեց Ս. Գերեզմանի շուրջ կանգնած խուռներամ բազմութիւնը ամենազգի ուխտաւորներուն։ Ապա տեղի ունեցաւ եռադարձ թափօր։ Թափօրականք երգեցին «Քրիստոս Յարեալ» շարականը։ Լուսահան Հայր Սուրբը եպիսկոպոսական խոյրով գլխաւորեց թափօրը։

Մեր թափօրին կը հետեւէին Ղապոց եւ Ասորւոց թափօրները։

Վանք դարձին, դարձեալ սկառտներու նըւագախումբով առաջնորդուած, թափօր կազմուեցաւ, լուսահան՝ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան շուրջառազգեստ եւ ապակէ պահպանակի մէջ Ս. Գերեզմանէն լոյսը ի ձեռին թափօրին մէջտեղէն քալելով։ Դաւթի Բերդին մօտ Լուսարարապետ Սրբազան Հօր տրուեցաւ շուրջառ, խաչ, գաւազան։ Շարականներ երգելով եւ զանգահարութեամբ

մուտք գործեցին Մայր Տաճար:

Լուսարարապետ Սրբազան Հայրը, Մայր Տաճարի դասին մէջ կարդաց Ս. Զատկական Աւետարանը եւ «Պահպանիչ»-ով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Ժամ մը ետք, կատարուեցաւ Ճրագալուցցի արարողութիւնը Մայր Տաճարին մէջ: Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Հայաստանէն ուխտաւորաբար Ս. Աթոռ ժամանած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան՝ Տ. Թովմա Վրդ. Խաչատրեան: Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ Նախատօնակ: Հանդիսապետն էր Հայաստանէն ուխտաւորաբար Ս. Աթոռ ժամանած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Դանիէլ Եպս. Ֆրնտրեան: Ապա, Միաբանութիւնը եւ դպիրներ «Այսօր յարեալ» շարականը երգելով գացին Պարտիզաթաղ, ուր տեղի ունեցաւ Տնօրհնէքի արարողութիւն:

Ճրագալուցցի Ս. Պատարագներ մատուցուեցան նաեւ Ս. Յարութեան Տաճարին մէջ՝ ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան, եւ ի Ս. Հրեշտակապետաց՝ պատարագեց եւ քարոզեց Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 20 Ապրիլ.- Ս. ԶԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ: Կէս գիշերէն ետք ժամը 2:00-ին Մայրավանքի մեծ դահլիճը ոտքի հանեց Միաբանութիւնը, որ Տ. Կորին Եպս. Բաղդասարեանի գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար:

Ս. Գողգոթայի ուխտէն ետք, մեր վերնամասերն մէջ պաշտուեցաւ ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «Հարց»: Ապա միաբան հայրեր եւ ժառանգաւոր սաներ զգեստաւորուած իջան Սուրբ Գերեզմանի շրջափակը, ուր պաշտամունքը շարունակուեցաւ եռադարձ թափօրով Գերեզմանի եւ Պատանատեղւոյն շուրջ: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց թափօրները: Թափօրի երկրորդ դարձին Ղպտիներու խորանին քովի կը կատարուեցաւ «Անդաստան», ապա Առաւօտեան ժամերգութիւնը շարունակուեցաւ թափօրով շուրջ Պատանատեղւոյն, ընթերցուեցաւ Աւետարան, ապա արարողութեան վերջաւորութեան հանդիսապետ Սրբազան Հայրը «Ճաշի քո Քրիստոս» շարականի երգեցողութեան ատեն թափօր դարձաւ Քրիստոսի Լոյս Գերեզմանին շուրջ: Թափօրը վերջացաւ Հայոց տեսչարանին առջեւ:

Առաւօտեան ժամը 6:50-ին տեղի ունեցաւ Հայոց երկրորդ մուտքը Սուրբ Յարութեան Տաճար՝ հանդիսապետութեամբ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի: «Ճաշու» ժամերգութեան յա-

ջորդեց Զատկական հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Սուրբ Գերեզմանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Զատկական տօներուն առիթով Սուրբ Աթոռ ժամանած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Գէորգեան հոգեւոր ճեմարանի ասպիրանտուրայի բաժնի ղեկավար՝ Տ. Դանիէլ Եպս. Ֆրնտրեան: Պատարագէն յետոյ Միաբանութիւնը եւ ժառանգաւոր Սաները Ոստիկանատան առջեւէն թափօրով եւ երգեցողութեամբ, վերադարձան Պատրիարքարան: Օրուան տօնակատարութիւնները աւարտուեցան Պատրիարքարանի դահլիճին մէջ՝ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր «Պահպանիչ»-ով:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատկական մեծահանգէս «Անդաստան»-ին:

Երկուշաբթի, 21 Ապրիլ.- Բ. օր Ս. Զատկի: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ խորանին վրայ մատուցեց եւ քարոզեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ս. Պատարագի վերջաւորութեան Լուսարարապետ Սրբազան Հայրը ամպհովանիի ներքեւ Ս. Խաչափայտի մասունքն ի ձեռին, իսկ Միաբան Հայրերը մասունքներով, եռադարձ թափօր դարձան, որուն աւարտին երգուեցաւ «Ճանապարհ»՝ ուխտաւորներուն բարի ճանապարհ մղղթելու համար: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեալ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Պատրիարք Սրբազանը բոլորին նշխար բաժնեց:

Երեքշաբթի, 22 Ապրիլ.- Գ. օր Ս. Զատկի: Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիւ: Ժամարարն էր Հայաստանէն ուխտաւորաբար Ս. Աթոռ ժամանած Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան՝ Տ. Շնորհ Աբղ. Սարգսեան: Ս. Պատարագէն ետք հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ վասն ամենայն ննջեցելոց:

Հինգշաբթի, 24 Ապրիլ.- Յիշատակ Սրբոց Նահատակաց մերոց, որք կատարեցան յընթաց Հայոց ցեղասպանութեան վասն հաւատոյ եւ հայրենեաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Սիոն Աբղ. Թաքուշեան: Յետ Ս. Պատարագի Միաբանութիւնը թափօրով եւ շարականի երգեցողութեամբ քալեց դէպի Ապրիլեան զոհերու յուշարձան, ուր տեղի ունեցաւ ոգեկոչման արարողութիւն:

Ուրբաթ, 25 Ապրիլ. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Շաբաթ, 26 Ապրիլ. Աւետումն Ս. Աստուածածնի: Առաւօտեան Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի գլխաւորութեամբ միաբան հայրերն ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց հանդիսապետ Սրբազան Հայրը:

Կիրակի, 27 Ապրիլ. Նոր Կիւրակէ (Կրկնազատիկ): Ըստ սովորութեան Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ քարոզեց լուսահան Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին:

Շաբաթ, 3 Մայիս. Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արտէն Քհնյ. Աբրահամեան:

Կէսօրէ ետք, գլխաւորութեամբ Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեանի, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սըրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Ներսէհ Վրդ. Ալոյեան:

Կիրակի, 4 Մայիս. Աշխարհամատրան (Կանաչ Կիւրակէ): Առաւօտեան ժամը 6:15-ին հանդիսապետութեամբ Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեանի, միաբան հայրերը մեկնեցան Ս. Յարութեան Տաճար, ուր Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան մեր վերնամատրան մէջ:

Հայոց երկրորդ մուտքէն ետք Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Պատարագիչ Սրբազան Հայրը Ս. Պատարագի վերջաւորութեան նախագահեց նաեւ Ս. Գերեզմանին առջեւ կատարուած «Անդաստան»-ին:

Շաբաթ, 10 Մայիս. Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գէորգ Վրդ. Հայրապետեան:

Կիրակի, 11 Մայիս. Կարմիր Կիւրակէ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Պատարագեց Տ. Ներսէհ Վրդ. Ալոյեան:

Կէսօրէ ետք Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 17 Մայիս. Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Արշակ Աբղ. Հազարեան:

Կիրակի, 18 Մայիս. Տօն Երեւման Ս. Խաչին: Առաւօտեան ժամերգութեան աւարտին Լուսարարապետ Սրբազան Հայրը ընթերցաւ Ս. Կիւրեղ Հայրապետի թուղթը յղուած Կոստանդ կայսեր եւ հանդիսապետեց «Անդաստան»-ի արարողութեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ, որուն վերելը գետեղուած էր վառ կանթեղներով Ս. Խաչին նշանը: Պատարագեց եւ քարոզեց Տ. Սեբովբէ Աբղ. Անտոնեան:

Շաբաթ, 24 Մայիս. Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սուրէն Քհնյ. Հազարեան:

Կիրակի, 25 Մայիս. Ս. Պատարագը մատուցեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան: Ժամարարն էր Տ. Վանիկ Ծ. Վրդ. Մանկասարեան:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»-ին:

Չորեքշաբթի, 28 Մայիս. Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր Բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման սրբավայրին մօտ լարուած վրանամատրան մէջ նախ կատարուեցաւ Պղծեալ Տաճարի արարողութիւն, ապա պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Երեկոյեան, նոյն վայրին մէջ պաշտուեցան «Եկեսցէ»-ի եւ Հսկման կարգերը եւ ապա Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները հանդիսապետութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Հինգշաբթի, 29 Մայիս. Համբարձումն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի: Առաւօտուն Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժներով բարձրացաւ Համբարձման լեռ, ուր «Հրաշափառ»-ով կատարուեցաւ պաշտօնական մուտք Սրբավայրէն ներս, եւ Հայկական բաժնի վրանին ներքեւ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց հանդիսապետ Սրբազան Հայրը: «Հայր մեր»-էն առաջ Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին առթիւ կատարուեցաւ «Հայրապետական մաղթանք»: Պատարագի

վերջաւորութեան սրբատեղւոյն առջեւ կատարւած «Անդաստան»-ին հանդիսապետեց պատարազիչ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 31 Մայիս.- Ս. Պատարագը մատուցւեցաւ Ս. Յակոբի տանիքը գտնուող Համբարձման մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Երեկոյեան ժամերգութիւնը եւ նախատօնակը պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան:

Կիրակի, 1 Յունիս.- Երկրորդ Ծաղկազարդ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները կատարուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Տիրան Վրդ. Յակոբեան:

«Անդաստան»-ին հանդիսապետեց Տ. Կորիւն Եպս. Բաղդասարեան Սրբազան Հայրը:

Շաբաթ, 7 Յունիս.- Ս. Պատարագը մատուցւեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Երեկոյեան՝ Հոգեգալստեան նախատօնակին ի Ս. Յակոբ, նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Գիշերասկզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»-ի եւ Հսկման կարգերուն նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Կիրակի, 8 Յունիս.- ՀՈԳԵԳԱԼՈՒՍ: Առաւօտեան ժամերգութեան աւարտին հանդիսապետութեամբ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի կատարուեցաւ «Անդաստան» ի Ս. Յակոբ: Տօնի Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան, որ Պատարագի ընթացքին կարգաց նաեւ Յովհաննէս Ոսկեբերանի Հոգեգալստեան ներբողը:

Կէսօրէ ետք, Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր մեկնեցան Սիոն լեռ, այցելեցին վերջին ընթերցան վերնատունը: Օրուան դէպքին պատմական վայրը կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն, որմէ յետոյ Միաբանութիւնը մտաւ մեր Ազգային գերեզմանատուն, եւ անդ հոգեհանգստեան պաշտօն կատարեց Ս. Աթոռոյս հանգուցեալ Պատրիարքաց, Լուսարարապետաց եւ միաբանից հոգիներու հանգստեան համար:

Երկուշաբթի, 16 Յունիս.- Սրբոց Կուսանացն Հռիփսիմեանց: Գիշերային եւ Առաւօտեան ժամեր-

գութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան՝ Ս. Հռիփսիմէի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Ուրբաթ, 20 Յունիս.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 21 Յունիս.- Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Յիշատակ ելանելոյն ի Վիրապէն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Սիոն Արք. Թաքուշեան:

Նոյն օրը երեկոյեան, նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը, ապա «Տէր ողորմեա» երգուեցաւ ծնրադիր:

Կիրակի, 22 Յունիս.- Տօն Կաթողիկէ եկեղեցւոյ Սրբոյ էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

«Հայր Մեր»-էն առաջ «Հայրապետական մաթանք»-ին նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Կիրակի, 29 Յունիս.- Գ. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն՝ մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Պատարագեց Տ. Արշակ Արք. Ղազարեան:

Ուրբաթ, 4 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 5 Յուլիս.- Գիւտ նշխարաց Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Վազգէն Վրդ. Ալէքեան:

Կիրակի, 6 Յուլիս.- Դ. Կիրակի զկնի Հոգեգալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Նոր Երուսաղէմի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Ներսէս Վրդ. Ալոյեան:

Չորեքշաբթի, 9 Յուլիս.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Հինգշաբթի, 10 Յուլիս.- Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց՝ Սահակայ եւ Մեսրոպայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց Կիւլպէնկեան Մատենադա-

րանի Տեսուչ՝ Տ. Ներսես Վրդ. Ալոյեան:

Շաբաթ, 12 Յուլիս. Սրբոցն՝ Տրդատայ Թագաւորին մերոյ եւ Աշխէն Տիկնոջն եւ Խոսրովիդըխտոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Աղան Վրդ. Գոգչեան:

Նոյն օրը, Երեկոյեան Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Կիրակի, 13 Յուլիս. Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: Առաւօտեան Տ. Կորին Եպս. Բաղդասարեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրերը ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանի պարտէզ եւ մոռտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան Ս. Պատարագը մատուց Տ. Սիոն Աբղ. Թաքուշեան:

Ուրբաթ, 18 Յուլիս. Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 19 Յուլիս. Սրբոց Երկոտասան Առաքելոցն Քրիստոսի եւ Պօղոսի՝ Երեքտասաներորդ Առաքելոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Պատարագեց եւ քարոզեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Կիրակի, 20 Յուլիս. Զ. Կիրակի գկնի Հոգեգալստեան: Բարեկենդան Վարդավառի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանգիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան: Ժամարարն էր Տ. Ներսես Վրդ. Ալոյեան:

Ուրբաթ, 25 Յուլիս. Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շաբաթ, 26 Յուլիս. Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ: Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի՝ Ս. Էջմիածին եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Սերովբէ Աբղ. Անտոնեան:

Երեկոյեան, Վարդավառի նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Իրիկնադէմին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուեցան «Եկեղեցի» եւ «Հսկման» արարողութիւնները: Հանգիսապետն էր Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Կիրակի, 27 Յուլիս. Վարդավառ: Տօն Այլակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Յետ Առաւօտեան ժամերգութեան կատարուեցաւ օրուան «Անդաստան»-ը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Տ. Թէոդորոս Եպս. Զաքարեան:

Երկուշաբթի, 28 Յուլիս. Յիշատակ մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Պատարագեց՝ Տ. Արշակ Աբղ. Ղազարեան: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն:

Պատրաստեց՝ ՍԻՈՆ ԱՔԵՂԱՅ ԹԱԲՈՒՇԵԱՆ

